



## Հայաստանի Ի Նպաստ Դրամահաւաք Լու Անձելըսի Մարաթոնին

**LNU Անձելըս.-** Կիրակի, Մարտ 20ին կայացած Լու Անձելըսի Մարաթոնին ընթացքին, խումբ մը հայորդիներ առիթը օգտագործած են «Ռիլ Մետիսին» հիմնարկին միջոցաւ դրամահաւաք կատարելու համար:

Հակառակ տեղացող անձրեւին, Մարաթոնի մասնակիցներուն մէկ մասը ամբողջացուց 5 քլմ. վազքը, իսկ ուրիշներ՝ ամբողջ մրցումը (26.2 մղոն), գոյացնելով 22,000 տողար գումար մը, որուն մէկ մասը պիտի յատկացուի նաեւ ձափոնի երկրաշարժէն ու ծովաշարժէն տուժած քաղաքացիներու:

Հայաստանի մէջ, «Ռիլ Մետիսին» հիմնարկը իր աշխատանքը կեղու-

նացուցած է Շինուհայր գիւղին մէջ գործող դարմանատան վրայ, որ երեխաներու և մայրերու բժշկական սպասարկութիւններ կը տրամադրէ մօտակայ 7 գիւղերու մէջ եւս:

Երեխաներու պատուաստումներու կողքին, դարմանատունը շտապ օգնութեան ու խորհրդատուական սպասարկութիւններ, ինչպէս նաեւ ձրի դեղորայք կը տրամադրէ շրջանի բնակչութեան:

Հիմնարկը մարդասիրական աշխատանք կը տանի աշխարհի տարածքին: Անոր գործունէութեան մասին մանրամասն տեղեկութիւններ կարելի է գտնել [www.realmedicinefoundation.org](http://www.realmedicinefoundation.org) կայքին վրայ: